«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի
կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի
2024-2025 ուստարվա ընդունելության կանոնները

Ճեմարանի կիրակնօրյա նախապատրաստական դպրոց կարող են ընդունվել ընթացիկ ուստարում հանրակրթական դպրոցների 5-9-րդ դասարաններում սովորողները, ովքեր՝

- ձգտում են խորացնել և ամրապնդել գիտելիքները հանրակրթական առարկաներից,
- ցանկանում են աջակցություն ստանալ ճեմարանի ընդունելության քննություններին նախապատրաստվելու համար:

Կիրակնօրյա դպրոցի պարապմունքները անցկացվում են հետևյալ առարկաներից.

- մաթեմատիկա,
- հայոց լեզու (մայրենի),
- ռուսաց լեզու,
- անգլերեն

8-րդ և 9-րդ դասարաններում սովորողների համար կարող են կազմակերպվել նաև պարապմունքներ բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) և հասարակագիտական (հայոց պատմություն, համաշխարհային պատմություն և հասարակագիտություն) առարկաներից:

Դասավանդվող առարկաների ծրագրերը համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչի և Ճեմարանի առարկայական ծրագրերի պահանջներին:

Կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի խմբերում ունկնդիրների թիվը, որպես կանոն, չի գերազանցում 20-ը: Խմբի պարապմունքները սկսվում են ամենաքիչը 5 սովորողների առկայության դեպքում:

Ուսումնական տարվա ընթացքում դիմողները ներգրավվում են գործող խմբերում: Խմբերում սովորողների թիվը 20-ից գերազանցելու դեպքում խումբը կիսվում է:

Կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել ճեմարանի էլեկտրոնային կայքում՝ https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSe8IanIPZ7yHHgAACM6Ckjjn7yvJLTYSJthaL_ERPkuMaeHGQ/viewform հղումով:

Դասընթացներին մասնակցող սովորողների ծնողների հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:

Դասընթացներին որպես ազատ ունկնդիր կարող են մասնակցել՝

ա/ երկկողմանի ծնողազուրկ

բ/ զոհված ազատամարտիկների

գ/ բազմազավակ (4 և ավելի երեխա) ընտանիքների երեխաները:

Պարապմունքները անցկացվում են ճեմարանի փորձառու ուսուցիչների կողմից, առկա ձևաչափով, շաբաթը մեկ անգամ (կիրակի օրերին, անհրաժեշտության դեպքում պարապմունքները կարող են անցկացվել շաբաթ օրերին) ճեմարանի գլխավոր մասնաշենքում՝ Նոր Նորքի 5-րդ զանգված, Արտեմ Միկոյան փողոց 35:

Հեռախոսներ՝ 010-680102, 055-403798: